ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-35

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Է. Գասպարյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 225 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը,ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) ունեցող թվով 20 ուսանողներին, որից՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող թվով 16 ուսանողների, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների թվով 1 ուսանողի, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող թվով 3 ուսանողների, որի դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) :

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինը կազմում է 68 424 500 (վաթսունութ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 68 046 900 (վաթսունութ միլիոն քառասունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ 308 900 (երեք հարյուր ութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ 10 700 (տասը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում 58 000 (հիսունութ հազար) (քառասունչորս հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Ք.Արարատ, Խանջյան 67
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900428000435
Հ/Հ 900011005460	
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն
պարտականությունները կատարող՝	
_____ Վ. Գասպարյան	_____ Է. Գասպարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ